

ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԿԱԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Առնուղ Վարդանյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտ

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումները կոչված են ապահովելու ինչպես ողջ իրավական համակարգի, այնպես էլ քրեական արդարադատության շրջանակներում անձի իրավունքների արդյունավետ երաշխավորումը: Անվիճելի է, որ իրավական պետության առաջնահերթ խնդիրներից է անձի սեփականության պաշտպանությունը, որն իրավական քաղաքակրթության զարգացման ողջ ժամանակաշրջանում ունեցել է հիմնարար նշանակություն: Հետևաբար, սահմանադրաիրավական և միջազգային առաջադեմ պահանջներին համապատասխան անձի սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանության երաշխավորումն իրավունքի բոլոր ճյուղերի, այդ թվում՝ քրեական դատավարության խնդիրն է:

Անձի սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանության կապակցությամբ քրեադատավարական հարթությունում առանցքային նշանակություն ունի գույքի վրա կալանք դնելու կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների հստակ կանոնակարգումը, որի պարագայում այդ իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտությունը կարող է համարվել իրավաչափ:

Նախ և առաջ պետք է նշել, որ գույքի վրա կալանք դնելու ՀՀ քրեադատավարական նորմերով օրենսդիրն այն դատում է քննչական գործողությունների շարքին: Մինչդեռ, իրավագետներին հայտնի է, որ այն երբևէ չի կարող համարվել քննչական գործողություն, քանի որ գույքի վրա կալանք դնելուն բնորոշ չէ քննչական գործողության կատարման ճանաչողական բնույթը: Դրանով է պայմանավորված, որ ՀՀ Նախագահի ՆԿ-96-Ա կարգադրությամբ¹ սկիզբ դրված դատաիրավական բարեփոխումների շրջանակներում մշակված և ներկայումս ՀՀ Ազգային ժողովի օրակարգում գտնվող քրեական դատավարության օրենսգրքի նախագծում գույքի վրա կալանք դնելը ոչ թե քննչական գործողություն է, այլ դատավարական հարկադրանքի միջոց, քանի որ այն պրևենտիվ բնույթ ունի, այսինքն՝ ուղղված է գույքային բնույթ կրող հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի կանխմանը²:

Սակայն պետք է արձանագրել, որ անձի գույքի վրա կալանք դնելու գործողության վերաբերյալ հիմնահարցերն առավել ընդգրկուն են և չեն սահմանափակվում միայն վերը նշվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որն ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին և օրինական ուժի մեջ մտել 1999 թվականի հունվարի 12-ից, ամբողջ-

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարության ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին:

² Այդ մասին տե՛ս **Корнуков В.М.**, Меры процессуального принуждения в уголовном судопроизводстве, Саратов, 1978, էջ 14, **Коврига З.Ф.** Уголовно-процессуальное принуждения, Воронеж, 1975, էջ 36-37, **Петрухин И.Л.** Неприкосновенность личности и принуждение в уголовном процессе, М., 1989, էջ 204:

ջությամբ հիմնված է ԱՊՀ անդամ պետությունների կողմից 1996 թվականի փետրվարի 17-ին Սանկտ Պետերբուրգում կայացված որոշմամբ ընդունված քրեական դատավարության մոդելային օրենսգրքի վրա (այսուհետ՝ նաև Մոդելային օրենսգիրք)¹:

Հիշյալ Մոդելային օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակողմանի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված՝ բազմաթիվ, այդ թվում՝ գույքի վրա կալանք դնելը կանոնակարգող իրավանորմերը ներմուծվել են Մոդելային օրենսգրքից: Ընդ որում, դա իրականացվել է թերի, որի հետևանքով խաթարվել է գույքի վրա կալանք դնելու բովանդակային արժեքանությունը:

Համեմատական ուսումնասիրություն կատարելու արդյունքում պարզ է դառնում, որ անձի սեփականության անձեռնմխելիությունը սկզբունքի մակարդակով երաշխավորում են ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, այնպես էլ Մոդելային օրենսգիրքը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 13-րդ հոդվածում ամրագրում է. «1. Քրեական դատավարության ընթացքում անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք կարող է դրվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ (...):»:

Սակայն, ի տարբերություն քրեական դատավարության օրենսգրքի՝ Մոդելային օրենսգրքի 18-րդ հոդվածում նշվում է. «Անձի բակային և այլ սեփականության վրա կալանք կարող է դրվել քրեական վարույթի ընթացքում բացառապես դատարանի որոշմամբ, բացառությամբ սույն քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ դեպքերի»:

Այսինքն՝ դեռևս 1996 թվականին մշակված Մոդելային օրենսգրքում ամրագրվել է, որ անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը պետք է իրականացվի բացառապես դատարանի որոշմամբ: Ինչպես նշում է հանրաճանաչ գիտնական Ի.Պետրովսիինը, դատարանն առավել վստահելի երաշխավոր է, քանի որ այն կաշկանդված չէ գերատեսչական շահերով և պատասխանատվություն չի կրում հանցագործության բացահայտման համար քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում²: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումների պատճառով 21-րդ դարի 2-րդ տասնամյակում դեռևս շարունակվում է անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունն իրականացվել առանց դատարանի թույլտվության:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պատմահամեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ դեռևս 1864 թվականից գործող քրեական դատավարության կանոնադրության 268-րդ հոդվածը քննիչին պարտադրում էր մեղադրյալի գույքի վրա կալանք դնելիս դիմել դատարան: Միայն խորհրդային տարիների ընթացքում այդ մոտեցումը փոխվեց, և ընդունված նոր քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն ընձեռեց քննիչին կամ դատախազին կայացնելու գույքի վրա կալանք դնելու մասին որոշում առանց դատարանի թույլտվության³: Այնինչ, Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ

¹ Ст'у Модельный уголовно–процессуальный кодекс для государств - участников Содружества Независимых Государств, Рекомендательный законодательный акт.

² Ст'у И. Петрухин, Прокурорский надзор и судебный контроль за следствием // Рос. юстиция. 1998, С. 12.

³ Ст'у http://krokt.vol.sudrf.ru/modules.php?name=press_dep&op=3&did=10

հողվածի համաձայն՝ քննիչը նույնիսկ իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ դիմել դատարան անձի գույքի վրա կալանք դնելու միջնորդությամբ, քանի որ անհրաժեշտ է ստանալ դատախազի համաձայնությունը:

Կարծում ենք, անձի գույքի նկատմամբ կալանք դնելու համար իրավական երաշխիքների բարձր շեմ սահմանելը հիմնավորված է՝ հաշվի առնելով անձի սեփականության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտության կապակցությամբ ինչպես Եվրոպական կոնվենցիայի պահանջները և Եվրոպական դատարանի դիրքորոշումները, այնպես էլ ՀՀ Սահմանադրության և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված՝ Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Այդ իրավական նորմի հիման վրա՝ անձի սեփականության իրավունքի երաշխիքներին Եվրոպական դատարանն անդրադարձել է մի շարք վճիռներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռներում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը՝ Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի վճռի 69–77-րդ կետերում, Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի վճռի 42–47-րդ կետերում, Թունյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի վճռի 35-39-րդ կետերում, Ղանիեյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի վճռի 35-39-րդ կետերում, Ղասաբյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի վճռի 24-26-րդ կետերում հայտնել է հետևյալը. «(...) թիվ 1 Արձանագրության 1–ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելուն պետական մարմինների կողմից ցանկացած միջամտություն պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ գույքից զրկելը թույլատրվում է միայն «այն պայմաններում, որոնք նախատեսված են օրենքով», իսկ երկրորդ պարբերությամբ սահմանվում է, որ պետություններն իրավասու են իրականացնելու վերահսկողություն գույքի օգտագործման նկատմամբ՝ կիրարկելով «օրենքներ»: (...) «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով» արտահայտությամբ առաջին հերթին պահանջվում է համարժեքորեն հասանելի և բավականաչափ հստակ ներպետական իրավական դրույթների առկայություն և կիրառության ապահովում (տե՛ս Լիթգուն և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1986 թվականի հուլիսի 8, § 110, շարք «Ա», թիվ 102)»:

Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ անձի սեփականության իրավունքի սահմանափակում է նախատեսում նաև 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը՝ ամրագրելով հետևյալը. «Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՀՀ սահմանադրական դատարանն անձի սեփականության իրավունքի սահմանափակման անդրադարձել է ՍԴՈ–903 որոշմամբ, որտեղ մեկնաբանել է՝ «սեփականությունից զրկում» ձևակերպումը. «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նա-

խատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ պարբերություն),

բ) սեփականագրվում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետևում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են շրջակա միջավայրը, այլ անձանց, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Ի տարբերություն 2005 թվականի ՀՀ Սահմանադրության՝ 2015 թվականի տեքստում տեղ է գտել անձի սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությունը, որտեղ, սակայն, «բացառապես դատարանի որոշմամբ» անձի սեփականության իրավունքի սահմանափակման պահանջ նախատեսված չէ, որը մեր հանգամանք առավելապես վերաբերում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջների կատարմանը: Այսպես, այդ օրենքի 30.2-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում անձի գույքի նկատմամբ կալանք դնել առանց դատարանի թույլտվության, որի սահմանադրականությունը դեռևս 2013 թվականի հունվարի 30-ին քննարկել է ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1073 որոշմամբ և անձի հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով անձի գույքի նկատմամբ առանց դատարանի թույլտվության կալանք դնելու հնարավորությունը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Ընդ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ դիմումատուն որպես իր կողմից ներկայացված դիմումի հիմնավորում վկայակոչել է նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասը, որտեղ սահմանված է եղել. «Քրեական վարույթի ընթացքում անձանց ֆինանսական միջոցների և այլ գույքի վրա արգելանք դնելու իրականացվում է միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ նշված օրենսգրքով նախատեսված անհետաձգելի դեպքերի: Անհետաձգելի դեպքերում, երբ հարկադրանքի միջոցի անհապաղ չկիրառումը կարող է հանգեցնել գույքի կորստի, վնասման կամ ոչնչացման, գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել դատախազի որոշմամբ: Այս դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է համապատասխան որոշումը և այն հիմնավորող նյութերը ներկայացվեն դատարանի հաստատմանը» (սույն իրավանորմը նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում բացակայում է, սակայն առկա է պահանջ առ այն, որ քննիչի կողմից կայացված՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է ներկայացվի դատարանի հաստատմանը):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեև անձի հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով առանց դատարանի թույլտվության արգելանք դնելը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, ապա վերջինս *mutatis mutandis* կիրառելի չի կարող լինել նաև քրեական դատավարության ընթացքում առանց դատարանի թույլտվության անձի գույքի վրա կալանք դնելու նկատմամբ՝ ներքոշարադրյալ հանգամանքներից ելնելով.

ա) Եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմինը արգելանքը դնում է միայն հարկ վճարողի գույքի վրա, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ կալանք կարող է դրվել ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի, այլ նաև բարեխիղճ երրորդ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա (օրինակ՝ Ա–ն, չարաշահելով Բ–ի վստահությունը, վերջինիս սեփականությունը վաճառում է Գ–ին (բարեխիղճ ձեռք բերող), որի կապակցությամբ նախաձեռնված վարույթի շրջանակներում սեփականության իրավունքով Գ–ին պատկանող հանցագործության առարկայի նկատմամբ անհրաժեշտ է լինում դնել կալանք),

բ) Եթե անձի սեփականության նկատմամբ իրականացվող միջամտության համաչափությունն ապահովելու նպատակով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածում ամրագրվել է, որ անձի գույքի վրա արգելանք կարող է դրվել բացառապես իր ունեցած հարկային պարտավորությունների չափով, ապա քրեական վարույթի ընթացքում, մասնավորապես՝ նախաքննության ընթացքում, անձի գույքի վրա դրվող կալանքի չափը որպես կանոն որոշակիացված չի լինում, այսինքն՝ անձի գույքի վրա կալանք չի դրվում որոշակի արժեքի չափով,

գ) Եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում անձի գույքի վրա դրվող կալանքը ժամանակային առումով կրում է կանխատեսելի բնույթ, այն է՝ մինչև հարկային պարտավորության կատարումը, ապա քրեական դատավարությունում այն կրում է անկանխատեսելի բնույթ, որովհետև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չեն ոչ նախաքննության, ոչ դատական քննության առավելագույն ժամկետներ:

Կարծում ենք, որ վերոնշյալ կետերում վկայակոչված հանգամանքներն առնվազն բավարար են, որ քրեական դատավարության ընթացքում անձի գույքի վրա դրվող կալանքը չնույնացվի անձի հարկային պարտավորությունների չկատարման կապակցությամբ գույքի վրա դրվող կալանքի հետ:

Ուստի քրեական վարույթի ընթացքում անձի գույքի վրա կալանքը պետք է դրվի բացառապես դատարանի թույլտվությամբ, որպիսի մոտեցում որդեգրված է նաև նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում: Այսպես, նախագծի 133-րդ հոդվածի 1–ին մասում նախատեսված է. «1.Նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա: Այդ որոշումը և այն հիմնավորող նյութերը եռօրյա ժամկետում ներկայացվում են իրավասու դատարանի հաստատմանը: Դատական վարույթում գույքն արգելադրվում է դատարանի որոշմամբ»:

Թեև նման բովանդակությամբ նորմը լուծում է մեր կողմից քննարկվող հիմնահարցը, սակայն, կարծում ենք, գույքի վրա կալանք դնելու նկատմամբ դատական վերահսկողությունը քննիչի որոշումը «հաստատելու» եղանակով կյանքի կոչելու մոտեցումն ընդունելի համարվել չի կարող:

Այսպես, նախ անհասկանալի է, թե արդյոք դատարանը քննիչի կողմից կայացրած որոշումը պետք է «հաստատի»՝ կայացնելով պատճառաբանված որոշում, թե

«հաստատումը» պետք է իրականացվի քննիչի որոշման աջակողմյան վերին հատվածում ընդամենը դնելով դատավորի ստորագրություն և կնիք: Նման մտահոգությունը կարծում ենք տեղին է՝ պայմանավորված ներկայիս այն իրավակիրառ պրակտիկայով, երբ համանման եղանակով՝ առանց դատարանի որոշման, սակայն դատավորի ստորագրությամբ և կնիքով «հաստատված» քննիչի որոշմամբ անձին տեղավորում են հոգեբուժական հիվանդանոց: Վերջինիս իրավական հիմքը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի 2-րդ մասում. «2. Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը»: Մինչդեռ նման մոտեցումը, կարծում ենք, որ արդարացված համարվել չի կարող և ինքնին վտանգի տակ է դնում դատական վերահսկողությամբ պաշտպանվող առարկան՝ համապատասխան որոշման հասցեատիրոջը զրկելով Ղատարանի պատճառաբանությունների շղթային հետևելու հնարավորությունից:

Ուստի գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի կայացրած որոշման նկատմամբ «հաստատման» եղանակով վերահսկողության իրականացումը ստանում է վերացական, ձևական բնույթ: Այդ կապակցությամբ հիշատակման է արժանի Ռուսաստանի Ղաշնության սահմանադրական դատարանի կողմից 2014 թվականի հոկտեմբերի 21-ին կայացված թիվ 25-Պ որոշումը, որտեղ դատարանն արձանագրել է, որ գույքի վրա կալանք դնելու նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը չպետք է կրի ձևական բնույթ. այն պետք է լինի արդյունավետ, քանի որ գույքի վրա կալանք դնելով սահմանափակվում են անձի կողմից իր գույքը տիրապետելու (եթե այն վերցվում է), օգտագործելու և տնօրինելու իրավունքները¹:

Ուստի կարծում ենք, որ անձի սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունից ելնելով՝ անձի գույքի վրա կալանք դնելու բացառիկ իրավասությամբ պետք է օժտված լինի միայն դատարանը՝ կայացնելով պատճառաբանված դատական որոշում, որի վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են եղել դեռևս երկու տասնամյակ առաջ մշակված Մոդելային օրենսգրքում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել ևս մեկ ուշագրավ հանգամանք. այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածում ամրագրված է.

«1. Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին ստորագրությամբ հանձնում են գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և պահանջում հանձնել այն: Այդ պահանջը կամովին կատարելուց հրաժարվելու դեպքում գույքի վրա կալանքը դրվում է հարկադիր կարգով:

2.Քրեական գործի նախնական քննության ավարտից հետո դատարանի կայացրած որոշմամբ գույքի վրա կալանք դնելն իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

(...)

5. Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի վրա կալանք դնելու մասին կազմում է արձանագրություն, իսկ հարկադիր կատարողը՝ օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ: (...):»:

¹ Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_158679/

Ի տաբերություն վկայակոչված իրավանորմի 2-րդ մասի, որտեղ սահմանվում է, որ դատարանի որոշումն իրականացվում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով, 1-ին մասում նույնիսկ հիշատակված չէ «դատարան» եզրույթը, որից տպավորություն է ստեղծվում, որ դատարանն օժտված չէ անձի գույքի վրա կալանք դնելու իրավագործությամբ: Նման տպավորություն է առաջանում, քանի որ Մոդելային օրենսգրքում ձևակերպված նորմն անհաջող է վերախմբագրվել: Մասնավորապես, Մոդելային օրենսգրքը վերոնշյալ հոդվածի 1-ին մասում սահմանում է, որ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը ստորագրությամբ հանձնում են անձին դատարանի որոշումը, որը կամավոր եղանակով չկատարվելու դեպքում 2-րդ մասի ուժով դատարանի որոշումն ի կատար է ածվում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

Հենց այդ պատճառով էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխում, որը սահմանում է անձի գույքի վրա կալանք դնելու իրավանորմերը, նախատեսված չէ, որ Դատարանն առհասարակ ունի իրավասություն անձի գույքի վրա կալանք դնելու՝ բացառությամբ 235-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերը վկայակոչված անհաջող ձևակերպման: Այսինքն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում միայն սկզբունքի մակարդակով 13-րդ հոդվածում ամրագրված իրավանորմն է նշում Դատարանի կողմից անձի գույքի նկատմամբ կալանք դնելու հնարավորությունը:

Ընդ որում, իրավակիրառ պրակտիկայում հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը եթե կայացնում են անձի գույքի նկատմամբ կալանք դնելու մասին որոշում, ապա այն ի կատար չի ածվում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով (որպես կանոն ի կատար է ածում ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջոցով): Դրա պատճառն այն է, որ կատարողական վարույթի հարուցման հիմքը, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող» ծառայության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, կատարողական թերթն է, որը կարող է տրամադրվել բացառապես դատարանի կողմից:

Շարունակելով գույքի վրա կալանք դնելու կապակցությամբ ներկայումս ձևավորված իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնահարցերի քննարկումը՝ նշենք, որ գործող իրավակարգավորումների պայմաններում տարածված է քննիչների կողմից (քրեական գործերի մինչդատական փուլում) ենթադրյալ հանցանք կատարած անձանց գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելը՝ «հնարավոր» քաղաքացիական հայցի հատուցումը կամ գույքի բռնագրավումն ապահովելու պատճառաբանությամբ:

Մինչդեռ, մեր հանդգնմամբ, նման պատճառաբանությամբ անձի գույքի վրա կալանք դնելն այնքան էլ արդարացված համարվել չի կարող, քանի որ հանգեցնում է անձի սահմանադրորեն ամրագրված սեփականության իրավունքի անհամարժեք սահմանափակման: Այդ մասին է վկայում նաև տեսական գրականության ուսումնասիրությունը, որտեղ նշվում է, որ ինքնին պատճառված վնասի առկայությունը բավարար պայման չէ գույքի վրա կալանք դնելու համար¹:

¹ St' u A.A.Галактионовна. Проблемы наложения ареста на имущества в целях обеспечения возмещения вреда, Наука и современность, 2016., էջ 135-139

Այսպես, ապագայում ներկայացվելիք «հնարավոր» քաղաքացիական հայցի հատուցումն ապահովելու նպատակով գույքի վրա կալանք դնելու հնարավորություն չի ընձեռնում գործող քրեական դատավարության օրենսգիրքը հատկապես այն դեպքում, երբ որոշումը կայացնելու պահին գործով նույնիսկ քաղաքացիական հայցվորներ չկան:

«Հնարավոր» քաղաքացիական հայցի հատուցումն ապահովելու նպատակով գույքի վրա կալանք դնելու հնարավորություն ընձեռնում էր խորհրդային քրեական դատավարության օրենսգիրքը, մինչդեռ ներկայիս իրավակարգավորումների պարագայում կարծում ենք, որ երբ չկա քաղաքացիական հայց, ապա գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը դառնում է առարկայազուրկ:

Նման դիրքորոշումը հիմնված է այն մոտեցման վրա, որ այն դեպքում, երբ բացակայում է տուժողների կամահայտնությունն իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար, ապա պետությունը չպետք է իր նախաձեռնությամբ ստանձնի այդ անձանց իրավունքների պաշտպանությունն այլ անձանց իրավունքների անհամարժեք սահմանափակման հաշվին: Կարծում ենք՝ այդպիսի դիրքորոշումը որևէ կերպ վտանգի տակ չի դնում 1985 թվականի նոյեմբերի 29–ին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի ընդունած՝ «Հանցագործությունների և իշխանության չարաչափան գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների մասին» 40/34 բանաձևը, որտեղ հռչակվում է պետության կողմից օրենսդրական մակարդակով հանցագործության գոհերի փոխհատուցում ստանալու հնարավորության երաշխավորությունը:

Մինչդեռ, ներկայումս ձևավորված իրավակիրառ պրակտիկայի պարագայում՝ քննիչները կայացնում են մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու մասին որոշում՝ նկատի ունենալով, որ առկա են բազմաթիվ տուժողներ և անհրաժեշտ է ապահովել «հնարավոր» քաղաքացիական հայցի հատուցումը:

Վերոնշյալ քննարկված հարցերը դիտարկելով քրեական վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի պաշտպանության մոդելների ներքո՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ գործող իրավակարգավորումների պարագայում նախատեսված է հիշյալ շահերի պաշտպանության ունիֆիկացված մոդելը¹, որի դասական օրինակ է մասնավոր քրեական հետապնդման գործերով իրականացվող մինչդատական վարույթը:

Մինչդեռ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում գործում է դիֆերենցված մոդելը, որի հիմքում ընկած սկզբունքներից է այն, որ մասնավոր շահերի պաշտպանությունը չպետք է իրականացվի հանրային ռեսուրսների հաշվին, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հնարավոր չէ իրականացնել միայն մասնավոր ռեսուրսների հաշվին: Օրինակ՝ երբ մասնավոր քրեական հետապնդման գործերով չի իրականացվում մինչդատական վարույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը թաքնվում է, որի պարագայում գործի են դրվում հանրային ռեսուրսները՝ նրան հայտնաբերելու համար:

Հիշյալ մոդելների տարբերությամբ պայմանավորված՝ կարծում ենք, որ հաշվի առնելով տուժողներին պատճառված վնասի հատուցման կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների մասնավոր-իրավական բնույթը՝ դիֆերենցված մոդելի գաղափարախոսությունից հետևում է, որ հենց տուժողները սեփական նախաձեռ-

¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ք.Երևան, իրավաբանների միություն, 2014թ., էջ 10

նությանը պետք է միջոցներ ձեռնարկեն՝ իրենց պատճառված վնասի հատուցումն ապահովելու և իրենց մասնավոր շահերի պաշտպանությունն իրականացնելու նպատակով:

Մասնավորապես, գտնում ենք, որ դիֆերենցված մոդելի պարագայում գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելու իրավասությանը օժտված դատարանին քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում այդպիսի միջնորդություն պետք է ներկայացնեն հենց տուժողները: Վերջիններս պետք է դատարանի առաջ հիմնավորեն, որ գույքի վրա կալանք դնելն անհրաժեշտ է իրենց պատճառված վնասի հատուցումն ապահովելու նպատակով:

Հակառակ պարագայում, ինչպես արդեն նշել ենք, առնչվում ենք այն իրավակիրառ պրակտիկային, երբ տուժողի կողմից իր շահերի պաշտպանությանն ուղղված կամահայտնության բացակայության պայմաններում անձանց գույքի վրա կալանք դնելու մասին որոշումներ են կայացվում վարույթն իրականացնող մարմինների կողմից: Մեր համոզմամբ նման մոտեցումն արդարացված չէ, քանի որ խաթարվում է «գործառույթ-ինստիտուտ-իրավասություն» եռամիասնության շղթան, երբ քրեական վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների գործառույթները չեն համապատասխանում քրեադատավարական ինստիտուտի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի խնդիրների հիմքում ընկած՝ իրավունքի շահից բխող սկզբունքին համապատասխան լիազորությունները գործադրելու ելակետային պահանջին:

Այսպիսով, ամփոփելով սույն աշխատանքում քննարկված հիմնահարցերը՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ գույքի վրա կալանք դնելու՝ իր բնույթով դատավարական հարկադրանքի միջոցը ենթակա է արմատական վերանայման՝ ձերբազատվելով խորհրդային տարիներից մնացած հատկանիշներից, այն դարձնելով անձի՝ սեփականության իրավունքի երաշխավորման սկզբունքի հիման վրա գործող իրավական ներգործության միջոց:

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С АРЕСТОМ ИМУЩЕСТВА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Арнольд Варданян

Магистрант юридического факультета ЕГУ

В статье обсуждаются основные вопросы, возникающие при аресте имущества в ходе следствия как с точки зрения правовых норм, установленных законодателем, так и с точки зрения подходов, принятых в правоприменительной практике. Автор представляет правовую неопределенность в связи с институтом ареста имущества в ходе следствия.

По убеждению автора, правовая неопределенность основных вопросов, поднятых в статье, может быть разрешена, исходя из соображений защиты основополагающих прав и свобод человека, закрепленных в Конституции РА и Европейской конвенции.

MAIN ISSUES RELATED TO THE ARREST OF PROPERTY IN CRIMINAL PROCEDURE

Arnold Vardanyan

Masters Decree student at the YSU Faculty of Law

In the submitted article, the author discusses the issues that arise from the arrest of property during investigations both from the perspective of legal norms as defined by the legislator and the perspective of approaches adopted in law enforcement practice. The author discusses the existing legal uncertainty as regards the practice of arresting property during investigations.

The author has a strong belief that the legal uncertainty of the issues raised in the article can be overcome, departing from the considerations of the protection of the person's fundamental rights and freedoms as reserved in the RA Constitution and the European Convention.

Բանալի բառեր – գույքի արգելադրում, գույքի վրա կալանք դնել, սեփականության անձեռն-
մխելիություն, դատարանի որոշում, տուժող

Ключевые слова: арест имущества, наложение ареста, неприкосновенность имущества,
решения суда, пострадавший.

Key words: arrest of property, imposition of an arrest, inviolability of property, judicial decision,
injured.